

ՏՈՄԱՐԱՐԻ ԺՆԱԿԱՆ

ՏՈՄԱՐ ԵՒ ՏՈՆԱՑՈՅՑ

Հայկայ Շրջան: — Ուրեմն հայերն երկու տարեգլուխ ունենին, որոնց մէկի շարժականութեան և միւսի անշարժ լինելու պատճառով՝ այլևայլ ժամանակ պատահելով՝ պէտք է լինէր մի միջոց, երբ դաքս երկուսն էլ իրաբու հանդիպէին: Այդ երկու տարեգլուխները իրար հանդիպելու համար հարկաւոր էր 1460 տարուայ շրջան, որովհետեւ ամէն տարուայ աւելորդ 6 ժամերը տարի են գոյացնում 1460 տարում. —

$$\begin{array}{r} 1460 \\ \times 6 \\ \hline 8760 \quad 24 \\ \hline 365 \end{array}$$

Չորս տարին մի անգամ նահանջ չանելով՝ ամիսների օրերն առաջ են անցնում և արեգակնային կէտերին չեն համաձայնում, այնպէս որ այդ կէտերը 1460 տարուայ ընթացքում Հայոց տարուայ ամիսների իւրաքանչիւր օրը կարգով հանդիպում են. և ուրեմն իւրաքանչիւր 1460 տարին մի անգամ կարող է հանդիպել մի որոշ կէտին:

Որովհետեւ Հայկայ թուականը սկիզբն է առել Բրիստոսից 2492 տարի առաջ, ուստի առաջին հանդիպումը եղած է 1460 տարի յետոյ, այն է 2492 — 1460 = 1032 թուին նախքան Բրիստոս, Հայկական Պեճե հրկրորդի ազգապատկան օրերուն և Դաւիթ Մարգարէի ազգաւորութեան օրերուն: Երկրորդ հանդիպումը եղաւ Բրիստոսի 428 թուին, այն տարին՝ երբ Հայերը Արշակունի Արտաշէս թագաւորից զրկուեցան և Հայաստանը Յունաց և Պարսից միջև բաժանուեցաւ: Երրորդ գոգապարկութիւնը տեղի ունեցաւ 1888 թուի Օգոստոսի 11ին Հինգշաբթի օրը: Իսկ չորրորդ հանդիպումը կը լինի Հայկայ 5840 և Փրկչական 3348 թուին: Հայերը ունենին նաև հետևեալ թուականները. —

Բ. — ՀԱՏՈՑ ԼՈՒՍԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆ

Երբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանը լուսաւորեց քրիստոնէական լուսով՝ հայերը դորա յիշտակը յաւերժացնելու համար՝ այդ օրից (303 Յ. Ք.) սկսան թուական գործածել. սակայն այդ թուականը միայն գրչագիրներին մէջ գործածուեցաւ և այն՝ շատ կարճ ժամանակ:

Գ. — ՇԻՆ ՏՈՄԱՐ

ԿԱՍ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ

Հայերը Լուսաւորչից յետոյ սկսեցին Անդրէաս Բիւզանդացու դրած 200 ամեայ շրջանը գործածել, որի լրանալուց յետոյ Զատիկ տօնը խախտուեցաւ և այդ առթիւ ազգի մէջ շփոթութիւն ծագեցաւ. ուստի, Բրիստոսի 551 թուին, Եղիշապեցի Մովսէս Բ. Կաթողիկոսը ժողով կազմելով Դուին քաղաքում՝ կարգաւորեց մեր տօմարը և նոր թուական սահմանեց, որ կոչուեցաւ Հայոց մեծ թուական և որ մինչև այժմ գործ է ածուած ազգի մէջ. դա սկսուած է 551 թուի Օգոստոսի 11ից, որ օրը Հայոց առաջին տօնի, այն է Նաւասարդի առաջին օրը գործեցաւ: Մեծ թուականը նոյնքան ամիսներ և օրեր ունէր որքան և Հայկայ հին թուականը:

Դ. — ՍԱՐԿԱՆԱԳԱԴԻՐ ԿԱՐԳ

Եկեղեցական տօները կանոնաւոր տօնեւում համար՝ այդ տարիներին ոչ մէկն էլ յարմար չէր, որովհետեւ այդ տարիների հաշուով միևնոյն տօնը ամէն տարի միևնոյն օրը չէր գալիս, այլ զանազան օրեր. այդ պատճառով էլ հարկաւոր էր մի անգամ տարի ունենալ և ունեցանք այդ Յովհաննէս Սուրբաւազ կոչուած գիտնական վարդապետի աշխատութեամբ, նա 1116 թուին մեր տօմարը վերանորոգեց և նոր թուական սահմանեց, որ կոչուեցաւ Փոքր կամ Սուրբաւազադիր և կամ Յայմամուրաց: Յովհաննէսը կարգադրեց որ ամէն տարի աւելացող մօտ 6 ժամերից չորս տարուան ընթացքում գոյացած 1 օրը աւելացուի Աւելիաց ամսի 5 օրերին և այդպիսով Յուլեան տօմարի նման Հայոց տարին ևս չորս տարին մի անգամ նահանջ լինի: Այդպէս

էլ զասուսորցն նա եկեղեցական բոլոր տօները Յայրմաուսերքի մէջ, որոնք անշարժ տօնուում էին ամէն տարի:

Ե. — ՓՈՔՐ ԿԱՐ ԱՋԱՐԻԱՅԻ ԹՈՒԱԿԱՆ

Ջուղայիցի Ուզարիա անունով մի վարդապետ, Դաւիթ և Ուեղթիսեղեկ կաթողիկոսներին հրամանով, Քրիստոսի 1615 թուին մի նոր թուական սահմանեց Յուլեան տօմարի հաշուով, որի հետ ունեցած միակ տարբերութիւնը այն է որ նոր տարեգումիս նշանակեց Մարտի 21-ից և ամսներին նոր անուններ տուեց: Այսարիայի թուականը միայն Ջուղայիցի հայերը գործածեցին իբրև Հայաստանից գաղթելու յիշատակ:

* *

Ջանազան ժամանակներում մեր տօմարը նորոգեցին, առանց սակայն նոր թուական սահմանելու՝ նաև հետեւեալ անձինք. —

1. — 594 թուին, Արքահամ Ու. Կաթողիկոսը ընդունեց Ուղեքանդաղացի Հասաուղարաշխի 532 տարուան չըջանը:

2. — 1774 թուին, Սիմէոն Կաթողիկոսը վերջնականապէս նորոգեց մեր տօմարը և տօնացոյցը, որով անսխալ տօնում ենք մեր եկեղեցական տօները մինչև այժմ:

Զ. — ՓՐԿՁԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ

Հայերի ներկայ գործածական թուականն է Փրկչական թուականը: Մօտ հինգ դար շարունակ, քրիստոնեաները չունէին առանձին թուական. այդ թուականը Սկիւթացի Դիոնիսիոս կրօնքըրդը առաջարկեց Փրկչական 532 թուին: Դիոնիսիոսը ենթադրում էր որ Յիսուսը ծնուել էր Հռովմի հիմնադրութիւնից 753 տարի յետոյ. ուստի հետեւեալ 754 տարին նա համարում էր Փրկչական թուականի առաջին տարին: Սակայն սխալ էր Դիոնիսիոսի հաշիւը:

Որովհետև Քրիստոսի ծնունդը պատահեց Փրկչական հասարակ թուականի սկզբը՝ նասորութիւնից 4 տարի առաջ, վասնորոյ աւելի ընդհանուր կարծիք է Աւետարանի չի հնգեցատեմեբորդի ամի Տիբեեայ կայսերքը սկսել Հռովմի 764 թուից, որով

Քրիստոսի մահը 783-ին է ընկնում իսկ ծնունդը՝ 750 թուականի Յուլեարի 6-ին: Այս է ահա Փրկչական թուականի սկզբը, այն ինչ Դիոնիսիոսի հաշուով Քրիստոսի ծնունդը գալիս էր Քրիստոսի թուականից 4 տարի առաջ:

Զ.

ԺԱՄԱՆԱԿ

Ժամանակը մի ակնթարթից մինչև բիւրաւոր տարիներին միջոցն է, որ մարդիկ բնականապէս 24 ժամուան միջոցի վերայ բաժանեցին՝ լուսի և խաւարի փոփոխակի յաջորդութեան պատճառով: Ժամանակի սկիզբը, ինչպէս գիտենք Սուրբ Գրքից, աշխարհիս ստեղծման խառնիք օրիցն է հաշուււում, իսկ արեգակի և լուսնի ընթացքը չորրորդ օրը որոշուեցաւ:

Ժամանակը սովորաբար երկուքի է բաժանուում. — բնական և արուեստական: Բնական բաժանումը քննարկ են՝ տարին, ամիսը և օրը, որոնք երկնային մարմինների երևոյթներով են չափուում, իսկ արուեստական բաժանումը քննարկ են՝ դար, թուական, ժամ, րոպէ, մանրերկրորդ, այսինքն ժամանակի այն չափերը՝ որոնք արհեստապէս առաջ են եկած և որոնք ուղղակի կապ չունեն երկնային մարմինների երևոյթների հետ:

Տարին զանազան ազգերից ունեւ երկրի մի ամբողջ պտոյտն էին համարում արեւի շուրջը, իսկ միւսները՝ լուսնի տարեկան շրջանի ժամանակամիջոցը:

Ամիսը հաշուում էր լուսնի մէկ ծնունդից մինչև միւսը:

Շաբաթը լուսնի մէկ քառորդից մինչև միւսը:

Օրը արեւի ծագելուց մինչև միւս արեւածագը կամ մէկ արեւամտից մինչև միւսը: Ժամը գիշերուայ ու ցերեկուայ որոշ մասերի բաժանումն է:

Բոլորն ու ակնբարբը իւրաքանչիւր ժամը բաժանելու չափեր են:

Ա. — ԴԱՐ

Դարը հարիւր տարուայ շրջանն է: Դար է հոշուում նաև հազար տարուան միջոցը:

Նմանապէս մեծ դէպքերի ժամանակա-
միջոցներն էլ կոչուում են դար, ինչպէս որ
աշխարհիս ստեղծագործութիւնից մինչև
լրհնեղեզը եղած միջոցը (1655 տարի) կոչ-
ուում է աւաջին դար, լրհնեղեզից մինչև
Քրիստոսի ծնունդը՝ երկուրդ դար և Քրիս-
տոսից մինչև աշխարհիս վերջը՝ երրորդ դար:

Բ.— ՏԱՐԻՒ

Տարին ժամանակի զլխաւոր բաժան-
մունքն է, որ տասներկու ամսուն շրջան
ունի. և այդքան ժամանակի մէջ երկրը
մի պտոյտ է անուա արեգակի շուրջը, այն-
պէս որ մի տարեգլխին երկրին ինչ կէտից
որ սկսել էր իւր պտույտը, միւս տարեգլ-
խին նոյն միջոցին լինում է միևնոյն տե-
ղում:

Տարին երկու տեսակ է լինում. — տե-
ղակային կամ բնական և քաղաքական:

1. — Արեգակնային տարին այն է, որ
երկրիս 12 մասի կամ 365 օրուն, 5 ժամ-
ուն, 48 րոպէի և 50 մանրերկրորդի (և
6 մանրերկրորդի) շրջանում արեւի չորս
կողմը պտոյտ գալով՝ դառնում է իւր ա-
ռանցքի վերայ:

2. — Քաղաքականը այն տարին է որ
սովորաբար ամէն ազգ և տէրութիւն գործ
են դնում, որի հաշիւը ամբողջ օրերով է
լինում, առանց ժամերի ու մանրերկրորդ-
ների, և այդ աւելորդ ժամերն ու ման-
րերկրորդները հաւաքուելով՝ չորս տարին
մի անգամ մի ամբողջ օր են կազմում, որ
աւելացնելով հասարակ տարու 365 օրերի
վերայ՝ չորս տարին մի անգամ 366 օր են
հաշուում տարին, և այդ տարին կոչուում է
նահանգ տարի:

Ուրիշն քաղաքական տարին քնական
տարուց վեց ժամի չափ կարճ է. և այդ
երկու տարիները հաւասարեցնելու համար
է որ քաղաքական տարին չորս տարին մի
անգամ նահանջ ենք անում:

* *

Բացի արեգակնային տարուց կայ նաև
լուսնական տարի, որ լուսնի 12 անգամ
իւր ընթացքը կատարելու միջոցն է:

Լուսնական տարին էլ երեք տեսակ է
լինում. —

1. — Աստղաբաշխական, որ 354 օր, 8
ժամ, 48 րոպէ և 30 մանրերկրորդ ունի,
Այսքան ժամանակի ընթացքում լուսինը
պտտում է արեւի շուրջը:

2. — Քաղաքական, որ 354 օր ունի,
3. — Նահանգ, որ տասներեք ամիս
ունի կամ 384 օր:

Գ.— ԱՄԻՍ

Տարուայ զլխաւոր բաժանմունքը ամիսն
է. առհասարակ ամէն ազգերի մէջ տարին
տասներկու ամիս ունի և այս բաժանմունքը
նախնի ժողովրդներից է տեսած: Ամսի
գործածութիւնը ամենից առաջ լուսնի ե-
րևաթից առաջացու. մարդիկ տեսնելով որ
լուսինը մի անգամ ծնուելով և իւր շրջանը
կանոնաւոր կատարելով՝ դարձեալ ծնում
է, այդտեղից արդէն սկսեցին լուսնական
ամիսը գործածել. իսկ բաւական ժամա-
նակից յիտոյ սկսեցին նաև արեգակնային
ամիս գործածել:

Ամիսը երկուքի է բաժանուում. — աս-
ղաբաշխական կամ բնական և քաղաքական:

1. — Աստղաբաշխական կամ բնական
ամիսը այն է որ չափուում է երկրի կամ
լուսնի շարժողութիւնով: Վասնորոյ աստ-
ղաբաշխական ամիսն էլ բաժանուում է եր-
կուքի. — տեղակայնային և լուսնական:

Արեգակնային ամիս աւելում է այն ժա-
մանակամիջոցը, երբ երկրը շատաստեղու-
թեան մէկ կենդանակերպից հասնում է
մինչև միւսը. և որովհետեւ երկիրը արեւի
շուրջը պտտում է. կամ որ նոյնն է, եր-
կրը համաստեղութեան տասներկու կեն-
դանակերպերի առկէով անցնում է 365 օր-
ուն, 5 ժամուն, 48 րոպէի և 50 ման-
րերկրորդի (և 6 մանրերկրորդի) ընթացքում,
ուրեմն այդքան միջոցը տասներկու մասի
բաժնելով՝ իմանում ենք որ մի ամիսը
ունի 30 օր, 10 ժամ, 29 րոպէ և 4 ման-
րերկրորդ:

Լուսնական ամիս կոչուում է այն մի-
ջոցը, երբ լուսինը երկրիս շուրջը մի պտոյտ
է անում, և ունի չիճը 29 օր, 12 ժամ,
44 րոպէ և 3 մանրերկրորդ:

2. — Իսկ քաղաքական ամիսը, ինչպէս
և քաղաքական տարին էր, ամբողջ օրե-
րով ենք հաշուում առանց ժամերի ու ման-
րերկրորդներն հաշուել առնելու:

ՑՈՒԼԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ԱՄԻՍՆԵՐ

1. Յունուար	31 օր
2. Փետրուար	28 կամ 29 օր
3. Մարտ	31 օր
4. Ապրիլ	30 օր
5. Մայիս	31 օր
6. Յունիս	30 օր
7. Յուլիս	31 օր
8. Օգոստոս	31 օր
9. Սեպտեմբեր	30 օր
10. Հոկտեմբեր	31 օր
11. Նոյեմբեր	30 օր
12. Դեկտեմբեր	31 օր

Գրիգորեան տարուան ամիսները նոյնն են, միայն 12 (նոյեմբերի՝ 13) օր առաջ են սկսում Յուլեան տարուայ ամիսներէից։

ՀԱՅՈՑ ԱՄԻՍՆԵՐ

1. Նաւասարդ	30 օր
2. Հոռի	30 օր
3. Սահմի	30 օր
4. Տրէ	30 օր
5. Քաղոց	30 օր
6. Արաց	30 օր
7. Մեհեկան	30 օր
8. Արեգ	30 օր
9. Ահեկան	30 օր
10. Մարերի	30 օր
11. Մարգաց	30 օր
12. Հրոտից	30 օր
13. Աւելեաց	5 կամ 6 օր

ԱՋԱՐԻԱՅԻ ԱՄՍՈՑ ԱՆՈՒՆՆԵՐ

1. Շամա	7. Թիրայ
2. Աղամ	8. Դամայ
3. Շրաթ	9. Համիրայ
4. Նախայ	10. Արամ
5. Ղամար	11. Ուղան
6. Նազար	12. Նիրհան
13. Աւելեաց	

Ասաց օրերի որբանութիւնը նոյն է ինչ որ Հայոց ամիսներինը(²)։

(²) Միակ տարբերութիւնը ասոնց միջև այն է որ Նահանջ տարիներուն՝ յաւելուածական օրը Աշարիայի ամիսներուն մօտ կը բարդուի փոխանակ Աւելեացի 5 օրերուն՝ վերջին լման ամսուն (Ներհանի) 30 օրերուն վրայ (Պ. Նս.)։

Դ. — ԵՕԲՆԵԱԿ ԵՒ ՕՐ

1. — Ամիսը չորս մասն է բաժանում, որի ամէն մէկ մասը կոչւում է տարաթ կամ եօբնեակ, որովհետեւ ամէն մէկ մասը եօթն օր է։

Եօթնեակը ոմանք լուսնի եօթնօրեայ փոփոխութիւնից առաջ եկած են համարում, իսկ ոմանք էլ աշխարհիս եօթնօրեայ արարչութիւնից, Գրիթէ բուր տալքերի մէջ գործ է ածւում եօթնեակը. Հայերն էլ անյիշատակ ժամանակներից գործ են ածում նոյնը. բայց յայտնի չէ թէ սկզբում ինչ անուններ էին տալիս հայերը շաբաթուայ օրերին, սակայն ենթադրւում է, որ հին հնթանոսութեան ժամանակ Հոռովայնցւոց և Յուլեաց պէս եօթն մոլորակների անուններով են կոչուած եղել շաբաթուայ օրերը. իսկ այնուհետեւ Հրէից շաբաթուայ անունները քնդունեցին, միայն Միաշաբաթի տեղ հիւրակի (որ Յունարէն տերունական է նշանակում) և Պարասպիտի տեղ Ուրբաթ (որ Արարերէն կամ Ասորերէն նշանակում է պարաստութիւն) վերականգնելով նոյն օրերը։

Ահա՛ մեր հին հնթանոսական և ներկայ անունները զուգընթաց գասաւորութեամբ։

1. Կիրակի	— Արեգակ
2. Երկուշաբթի	— Լուսին
3. Երեքշաբթի	— Հրատ
4. Զորեքշաբթի	— Փայլածու
5. Հինգշաբթի	— Լուսնիագ
6. Ուրբաթ	— Լուսաբեր
7. Շաբաթ	— Երեւակ

2. — Օր աւելում է այն միջոցը, երբ երկիրը մի ամբողջ պտոյտ է պաւում իւր առանցքի վերայ, որ լինում է ճիշդ 24 ժամուան ընթացքում։

Օրը երկու կերպ է մտածւում. — աստղաբաշխական կամ բնական և արուեստական։

Աստղաբաշխական կոչւում է օրը 24 ժամ հաշուելով, այն է գիշեր և ցերեկ միասին առած և այդ օրը երկրիս ամէն կողմերը միակերպ անփոփոխ է լինում։

Իսկ արուեստական կոչւում է օրուայ այն մասը՝ որ տեսում է արեւի ծագելուց մինչև մայր մտնելը. և սա երկրիս այլեայլ

կողմերը և տարուայ զանազան եղանակներին մեծանում է կամ փոքրանում: Միայն տարին երկու անգամ գրչեր և ցիբիկ հաւասար են լինում:

Օրը իւրաքանչիւր ազգ մի որոշեալ կէտից է սկսում: Այսպէս՝ Արեւելեան ազգերից շատերը, ինչպէս Բաբելոնացիք, Պարսիկներ, Ասորիք, Յոյնք և ուրիշներ արեւը ծագելուց էին սկսում օրը հաշուել: Իսկ հին Աթենացիք, Հայերը, Հրեաները, Բուհեմացիք, Սիւէզացիք, Չինները, Տաճիկները և իտալական մի քանի նահանգներ՝ արեւի մայր մտնելուց, ինչպէս որ Աստուած հրամայեց Հրէից. — «Յիւրեկոյիսյ մինչև ցերեկոյն չարաթացուելիք զհարաթս Ձերն (Դեա. ԻԿ. 32):

Այս պատճառով Հրէայք իրանց Շարաթը Ուրբաթ հրեկոյից են սկսում, իսկ հայերի մէջ էլ այդ սովորութիւնը մնաց. այնպէս որ մեծ տօներին նախընթաց հրեկոյները նախատօնակ ենք կատարում եկեղեցիներում, այդ երեկոն համարելով հետեւեալ օրուան մի մասը: Արարացիք և այժմեան ասողաբաշխները օրը կէսօրից են հաշուում, իսկ եզրկատացիք, հին Հռոմէացիք և այժմեան արեւմտեան ազգերի մեծ մասը՝ կէս գիշերից:

Ե.— ԺԱՍ, ՐՈՊԵ ԵՒ ՄԱՆԵՐԿՐՈՐԴ

1. — Ժամը բնական օրուայ քսան և չորսերորդ մասն է: Հայոց մէջ օրը 24 հաւասար մասերի բաժանելու սովորութիւնը շատ հին է. որովհետև մեր անհամար զբոլազոր տոմարների մէջ տեսնում ենք, որ անյիշատակ ժամանակներից մնացած օրուան 24 ժամերին այնպալ բուն հայկական անուններ են տուած՝ արեւածագից սկսելով:

(Շարունակելի՝ 2)

ՅԵՐԵԿՈՒՑ ԺԱՄԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

- | | |
|----------------|----------------|
| 1. Այգ | 7. Շանթակոյ |
| 2. Մայգ | 8. Հրակաթ |
| 3. Զայրացեալ | 9. Հուրփայլեալ |
| (ձայրցեալ) | 10. Թաղաթեալ |
| 4. Ճառագայթեալ | (Խաւնիթեալ) |
| 5. Շառաւիղեալ | 11. Առաջօտ |
| 6. Երկրատես | 12. Արփոյ |

ԳՆԵՐՈՒՑ ԺԱՄԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

- | | |
|--------------|---------------|
| 1. Խաւարակ | 7. Խօթափեալ |
| 2. Աղջամուզլ | 8. Գրգակ |
| 3. Մթացեալ | 9. Հուսածեմ |
| 4. Շաղաւստ | 10. Առաւօտ |
| 5. Կամաւստ | 11. Հուսափայլ |
| 6. Բաւական | 12. Փայլածու |

Հռոմէացիք, Հրեայք, Յոյներն ու Հայերն օրուան ժամերը երկու մասերի էին բաժանում՝ ցերեկուայ և գիշերուայ: Յերեկուան ժամերը չորս մասերի էին բաժանում, իւրաքանչիւրը երեք երեք ժամ, որոնց անուանում էին առաջին ժամ (արեւածագից սկսելով) 12, 1, 2, երրորդ ժամ՝ 3, 4, 5, վեցերորդ ժամ՝ 6, 7, 8 և իններորդ ժամ՝ 9, 10 և 11 ժամերը:

Դիւրեւան ժամերն էլ չորս մասերի էին բաժանում, երեք երեք ժամ, որոնք կոչւում էին. առաջին պահ՝ 12, 1, 2, երկրորդ պահ՝ 3, 4, 5, երրորդ պահ՝ 6, 7, 8 և չորրորդ պահ՝ 9, 10 և 11 (Մատթ. ԺԴ. 25, Մկ. Զ. 48):

2. — Մի ժամը ունի 60 րոպէ կամ վայրկեան և մի րոպէն՝ 60 մանրերկրորդ (երկրորդական վայրկեան, արդի լեզուով՝ երկվայրկեան կամ ակնթարթ). իւրաքանչիւր մանրերկրորդ էլ բաժանւում է 60 մանրերկրորդ մասերի, և այս վերջին չափը գործ է զբուծում միայն աստղաբաշխական հաշիւներում:

ԳԻԻՏ ՔՆՆՅ. ԱՂԱՆԵԱՆՑ